

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-23/1»**

ք. Երևան

« 31 » հունվարի

2023թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ավագյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷԼ ԹԻ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում ղրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է:

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2300000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁸

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{18.1}:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ԿԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

¹⁸ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքվի «ներառյալ ԱԱՀ-ն» բառերով հանվում են:

^{18.1} Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

վԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²²

¹⁹ Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²⁰ Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավիամեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սղանձնված պարտավորությունների չկատարման գում ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

²² Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է: 25

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն

ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա

ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության

Հ/Հ 900011288025

ՀՎՀՀ 01223338



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Էլ Թի Մոտորս>> ՍՊԸ

Ք.Երևան, Մարգարյան 29/3

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՀ1570065411040100

ՀՎՀՀ01301624



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

25 Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
2	50111130/503	ներկայացված են ստորև	դրամ	600000	1	Ք. Երևան, Հալաբյան 41/ա	Ծառայությունները կմատուցվեն համապատասխան ժամանակահատվածի համար, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ.
3	50111130/504	ներկայացված են ստորև	դրամ	1000000	1	Ք. Երևան, Հալաբյան 41/ա	
4	50111130/505	ներկայացված են ստորև	դրամ	400000	1	Ք. Երևան, Հալաբյան 41/ա	
5	50111130/506	ներկայացված են ստորև	դրամ	300000	1	Ք. Երևան, Հալաբյան 41/ա	

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյուռնակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն

ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա

ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության

Հ/Հ 900011288025

ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/
Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ

<<Էլ Թի Մոտորս>> ՍՊԸ

Ք.Երևան, Մարգարյան 29/3

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՀ1570065411040100

ՀՎՀՀ 01301624

/ստորագրություն/
Կ.Տ



h/h	SU-1 (տեխնիկական զենման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	2-րդ չափ.	3-րդ չափ.	4-րդ չափ.	5-րդ չափ.
		ՇԵՎՐՈՒԼԵ-1, ԻՎԱ /2009թ./ 2 հատ	MERCEDES-BENZ S550 /2008թ./ 1 հատ	BYD S6 2.4 /2012թ./ 1 հատ	Գազել 2502 /1994թ./ 1 հատ
1	2	4	5	6	7
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները				
1	Բոնկման համակարգի ստուգում	750	750	750	750
2	Սառեցման համակարգի ստուգում	750	750	750	750
3	Յուղման համակարգի ստուգում	750	750	750	750
4	Արտածման համակարգի ստուգում	750	750	750	750
5	Կցորդման համակարգի ստուգում	750	750	750	750
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	750	750	750	750
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում			750	
8	Կրադանային փոխանցման տուփի ստուգում	750	750	750	750
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	750	750		
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	750	750	750	750
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	750	750	750	750
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	750	750	750	750
13	ABS համակարգի ստուգում	750	750	750	750
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	750	750	750	750
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	750	750	750	750
16	Թափքի վիճակի ստուգում	750	750	750	750
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	750	750	750	750
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	0	0	0	0
	1. Շարժիչ	0	0	0	0
1	Շարժիչի հանում և տեղադրում	15000	52500	18750	15000
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	15000	37500	26250	18750
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	3750	9000	3750	3750
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	6000	11250	5250	5250
5	Շարժիչի բլրկի գլխիկի հանում և տեղադրում	7500	15000	7500	7500
6	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	11250	30000	11250	11250
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	3750	3750	3750	3750
8	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3750	3750	3750	3750
9	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	1125	1875	2250	1875
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	750	1500	1125	1125

11	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3750	3750	3750	3750
12	Շարժիչի մխցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	3750	11250	3750	3750
13	Ծնկածն լիսեռի հղկում	15000	22500	15000	15000
14	Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	7500	22500	7500	7500
15	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	3750	3750	3750	3750
16	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում	3750	3750	3750	3750
17	Ծնկածն լիսեռի ուղղում	11250	11250	11250	11250
18	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7500	11250	7500	7500
19	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	11250	15000	11250	11250
20	Շարժիչի բլոկի փոխարինում	15000	15000	15000	15000
21	Շարժիչի զլանի փոխարինում (гидрошка)	7500	7500	7500	7500
22	Մխցի փոխարինում 1 հատ	3750	3750	3750	3750
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
25	Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	3750	3750	3750	3750
26	Փոկանիվի փոխարինում	3750	3750	3750	3750
27	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	2250	2250	2250	2250
28	Շարժիչի շղթայի փոխարինում	11250	22500	11250	11250
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	3750	3750	3750	3750
30	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	3750	3750	3750	3750
31	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7500	7500	7500	7500
32	Շարժիչի յուղի մղիչի փոխանակում	7500	18750	7500	7500
33	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	11250	11250	11250	11250
34	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	3750	3750	3750	3750
35	Յուղի ծորակի փոխարինում	3750	3750	3750	3750
36	Օդաքաշակ փողոսակի փոխարինում	3750	3750	3750	3750
37	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	22500	7500	7500
38	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	11250	11250	11250	11250
39	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	15000	15000	15000
40	Շարժիչի կափույրի փոխարինում	7500	7500	7500	7500
41	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	7500	7500	7500	7500
42	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	7500	7500	7500	7500
43	Մխցային օղակների փոխարինում 1 կ-տ	7500	7500	7500	7500
44	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	7500	7500	7500	7500
45	Ատամնանիվի փոխարինում	3750	3750	3750	3750
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	3750	3750	3750	3750
47	Սովաքիկի փոխարինում 1 կ-տ	7500	7500	7500	7500
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	11250	11250	11250	11250
49	Շարժիչի փոկի հղովակի փոխարինում	3750	3750	3750	3750

50	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	2250	2250	2250	2250
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	7500	7500	7500	7500
52	Շարժիչի յուղի արանքաչափի (ՔՅՏ) իրանի փոխարինում	3750	3750	3750	3750
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	7500	7500	7500	7500
54	Շարժիչի գամասեղի փոխարինում	2250	2250	2250	2250
55	Գլխիկի հեղույսի փոխարինում	2250	2250	2250	2250
56	Ծնկածև լիսեղի հեղույսի փոխարինում	2250	2250	2250	2250
57	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	7500	7500	7500	7500
58	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	11250	11250	11250	11250
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	0	0	0	0
59	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1500	1500	1500	1500
60	Ավտոմեքենայի յուղում	1500	1500	1500	1500
61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	6000	6000	6000	6000
62	Յուղի պոմպի փոխարինում	18750	18750	18750	18750
63	Յուղի ռադիատորի փոխարինում	7500	22500	7500	7500
64	Յուղի ռադիատորի նորոգում	3750	3750	3750	3750
65	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	11250	11250	11250	11250
66	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	7500	7500	7500	7500
67	Վառուցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2250	3750	2250	2250
68	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	7500	7500	7500	7500
69	Օդի զտիչի փոխարինում	750	750	750	750
70	Սրահի օդի զտիչի փոխարինում	750	750	750	750
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
72	Օդի զտիչի փողոկի հանում և տեղադրում	750	750	750	750
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	3000	3000	3000	3000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	3000	3000	3000	3000
75	Բոցամուղի կողավորում	7500	7500	7500	7500
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	3750	3750	3750	3750
77	Բենզամուղիչի փոխարինում	7500	7500	7500	7500
78	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	3750	3750	3750	3750
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
80	Բռնկման կարգավորում	3750	3750	3750	3750
81	CO կարգավորում	3750	3750	3750	3750
82	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
83	Ղեկավարման բլոկի վերանորոգում	11250	11250	11250	11250
84	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
85	Վառելիքի բաքի մաքրում	7500	7500	7500	7500

86	Օդի ծախսի տվիչի փոխարինում	7500	7500	7500	7500
87	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	7500	7500	7500	7500
88	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	3750	3750	3750	3750
89	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի փոխարինում	3750	3750	3750	3750
90	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի մաքրում	1500	1500	1500	1500
91	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	3750	3750	3750	3750
92	Տվիչի փոխարինում	3750	3750	3750	3750
	3. Սառեցման և արտածման համակարգ	0	0	0	0
93	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
94	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
96	Ռադիատորի նորոգում	15000	15000	15000	15000
97	Շերտափեղկի փոխարինում	7500	7500	7500	7500
98	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	3750	3750	3750	3750
99	Ընդարձակող բաքի փոխարինում	2250	2250	2250	2250
100	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1500	1500	1500	1500
101	Ջրի ծորակի փոխարինում	3750	3750	3750	3750
102	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	3750	3750	3750	3750
103	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	11250	11250	11250	11250
105	Վառարանի ռադիատորի նորոգում	7500	7500	7500	7500
106	Վառարանի շարժիչի փոխարինում	7500	7500	7500	7500
107	Թերմոստատի փոխարինում	6000	9750	6000	6000
108	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	7500	7500	7500	7500
109	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	1500	3750	3750	3750
110	Գեներատորի փոկի փոխարինում	3750	7500	3750	3750
111	Գեներատորի փոկի ձգող հղովակի փոխարինում	3750	3750	3750	3750
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
113	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	3750	3750	3750	3750
114	Խլարարի անուրի (хамыт) փոխարինում	750	750	750	750
115	Խլարարի ներդիրի փոխարինում	3750	3750	3750	3750
116	Խլարարի կախոցի փոխարինում	1500	1500	1500	1500
117	Հովացման հեղուկի փոխարինում	2250	2250	2250	2250
	4. Կցորդում և ՓՏ	0	0	0	0
118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	11250	11250	11250	11250
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	11250	11250	11250	11250
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	11250	11250	11250	11250
121	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750

122	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
123	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750
124	Կցորդման երկժանիքի փոխարինում	7500	7500	7500	7500
125	ՓՏ-ի հիմնական նորոգում	22500	0	22500	22500
126	ԱՓՏ-ի հիմնական նորոգում	22500	45000	22500	22500
127	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	11250	11250	11250	11250
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	3750	3750	3750	3750
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	3750	3750	3750	3750
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	11250	11250	11250	11250
131	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	11250	11250	11250	11250
132	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	7500	7500	7500	7500
133	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	7500	7500	7500	7500
134	ՓՏ-ի առամանակի փոխարինում	7500	7500	7500	7500
135	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	7500	7500	7500	7500
136	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	7500	7500	7500	7500
137	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	11250	11250	11250	11250
138	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	7500	7500	7500	7500
139	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	6000	6000	6000	6000
140	ՓՏ-ի յուղի փոխարինում	3750	3750	3750	3750
141	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	3750	3750	3750	3750
142	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	15000	15000	15000	15000
143	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	15000	15000	15000	15000
144	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	3750	3750	3750	3750
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	0	0	0	0
145	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	7500	7500	7500	7500
146	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500	7500	7500
147	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	7500	7500	7500	7500
148	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	7500	7500	7500	7500
149	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	7500	7500	7500	7500
150	Բաշխիչ տուփի դիֆրազմանների փոխարինում	7500	7500	7500	7500
151	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	7500	7500	7500	7500
152	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	7500	7500	7500	7500
